Մեզ շրջապատող աշխարհը իման ներծծված է հակառակիզացիոն հռեփորությամբ՝ ոչ առանց պագճառի։ Գլոբալիզացիայի հակառակորդներն իրենց մեծագույն փաստարկը կառուցում են այն փաստի վրա, որ ավանդույթն ու մշակութային յուրահարկությունները դրենի են զվել կապիկալիզմի գլոբալիզացված ձեւին, որպեղ գերիշխում է neo-laissez-faire գնդեսությունը։ Նրա սրենդման առաջին օրերին բնական ռեսուրսների գերշահագործման ծանր հետեւանքները, Էկոլոգիական ճգնաժամք, հարսպության անհավասար բաշխումը հարուստների ու աղքաֆների միջեւ ավելի է վարացել, համարյա հասել է անշրջելիության սահմանին։ Մինչդեռ մենք չպետք է հիասթափենք։ Այսօր մենք այսպեղ ենք,

որպեսզի աշխարհին հիշեցնենք պահի հրադապության մասին: Նմանափիպ համաժողովը ի զորու է իրազեկել այն մասին, թե ինչ է կաբարգում մեր մոլորակի հետ: Այն կօգնի մարդկանց ապահովել պայծառ, էկուոգիապես կայուն, սոցիալապես արդար ու հոգեւոր առումով ավարտուն ապագայով:

Լեւի Մթրառուը գանգապվում էր. «Այսօր մարդիկ հակված են նույն գեսքն ունենալ ու նույն գործողություններն անել: Այլ մարդկանց հետ ուղղակի շիման դեպքում նրանց զգացմունքները, ձգբումներն ու վախերը ազդեցություն չեն թողնում միմյանց անվիրանգության և բարեկեցության վրա: Նրանք, ովքեր նախկինում նախապարզությունը տալիս էին նյութական առաջնորդացին, ամբողջ աշխարհում սփռված մի քանի բնիկ ցեղերի ու իին ազգերի հետ դադարում են առհասարակ այդպիսին լինել: Ավելի կամ պակաս արագությամբ նրանք ներառվել են հիմնական քաղաքակրթության մեջ»: Լեւի Մթրառուը փայլուն վկայում է մի աշխարհի մասին, որը դեկավարվում է գլոբալիզացիայի կողմից, աշխարհ, որ փուզվեց նրա և մեր շորջ, աշխարհ, որպես իմ և նրա, ժամանակակցի ու հնագույնի միջեւ սահմանները լդոված են: Նախկին աշխարհի կարգը քաղաքական, մշակութային ու գնութեական մակարդակներում արդյունավետ կերպով փոխարինվել է կամ անհավասարակշռության մեջ է:

Որպես բանասրեղծներ եւ բնիկ ցեղերի խոսնակներ՝ մենք այսպես ենք, որպեսզի վկայենք քառասի ու վշտի մեջ գրնվող աշխարհի մասին: «Պարմության այս փուլում ակնհայտ է, որ մենք՝ բանասրեղծներս, պիտի մշգապես մեր ծայնը բարձրացնենք ընդդեմ դրեւ անհարմների կամ ազահ հասպարությունների կողմից նրա ոչնչացման: Այսպիսով, մենք չունենք այլընդրանք, միայն սա.

ԶԵՂԻ ՄԱԶԻԱ

մեր ավանդույթներն ամբողջությամբ ցույց տրալ մշակութային բազմազանության աշխարհին՝ որպես մեր մշակութային ու հոգեւոր ժառանգության վերահասքափում։ Այս ժառանգությունը մեզ են փոխանցել մեր նախնիներ՝ ինդրեկով, որ մեր ունեցածը կիսենք բոլորի հետ։ Այն սրբազնություն է շինության կաղապարը, որից եւ որի հետ նոր կյանք են առնում բոլոր այն մարդիկ, ովքեր հենց նոր են դուրս եկել ժամանակակից կյանքի նեղ զնդանից։

Բանափեղծական փորձի վրա հիմնված թարմացման եւ գոյակցության այս համագերեսարում մենք կոչ ենք անում, որ մեր բանափեղծական արքահայփությունը չարհամարհվի, երբ փառարքանում ենք մարդկության պարմական գիրակցությունը՝ որպես ամբողջություն։ 2007 թվականին ՄԱԿ-ի՝ բնիկ ժողովուրդների իրավունքներին վերաբերող Մանհիքեսպում մեր ներկայությունն ու մշակութային բազմազանությունը օրինականացվել է թե՛ ծավալի, թե՛ բովանդակության առումով։ Սա խոշոր քայլ է առաջ, թեև պիզի խոսքովանենք, որ բնիկ ռասաները երկար ժամանակ հարսփահարվել են մարդկային կամ արդյունաբերական բնույթի որոշ շարժիք ուժերի կողմից։ Ծնորհիվ ավելի հավասար կարգավիճակի, որ մեզ բախսր է վիճակվել, մենք խոսում ենք բանասփեղծի կամ գրողի՝ մշակութային կամ էթնիկ առանձնահավկությունների վրա հիմնված անհարականության, ինչպես նաև գրականության մեջ նրա յուրահագույկ ներդրման մասին։

Մեր ընթերցումները սփիպում են մեզ հավաքալ, որ ցանկացած խոշոր գրող, բանասփեղծ կամ նկարիչ նախեւառաջ պարկանում է իր ազգին, եւ հետո միայն ամբողջ աշխարհը կարող է ասել, որ նրանք իրենն են։ Դիմա մենք վայելում ենք Ալեքսանդր Պուշկինի, Դանթեի, Ուիլյամ Շեքսպիրի, Լի Բայիի, Դու Ֆուի պայծառ տո-

դերը, որ բոլոր ազգերի ու ռասաների հպարփությունն են, քանի որ նրանք մարմնավորում են այս պարադոքսալ ճշմարփությունը: Ենթադրվում է, որ հին արժեքային համակարգերն ու մշակութային ավանդույթներն անխուսափելիորեն մերժվում են նույնիսկ կործանվում են, եթե բախվում են գլոբալիզացիայի սպառնալիքին, որին բնորոշ է անմիջականությունը, արագությունն ու գեղինողության: Այս ենթադրության մեջ, անշուշտ, ճշմարփության դարր կա, բայց մեղալի մյուս կողմը իմաստության ավելի շար հարիկ է պարունակում: Եվ այս իմաստությունն ասում է մեզ, որ մարդկության պարմության ընթացքում աշխարհը շար է հարստացել մշակութային, պարմական ու հավաքական գործերություններից: Այս օրենքը սահմանել եմ՝ նկատի առնելով այն, ինչ կապարվել է հին ժամանակներից ի վեր: Մեր կուրսակած իմացությունը մշակութային եւ կենսաբազմազանության մասին մեզ անգեղորեն բերում է մեզ եզրահանգման. արժեքների ցանկացած խմբի կորուստը, անկախ նրանից, թե որքան լուսանցքային է մշակույթը, որից այն սերել է, վար է անդրադառնում մարդկության մնացած մասի վրա: Ես խոսում եմ արժեքների այնպիսի համակարգի մասին, որը եղ արմագավորված է հարուկ լեզու, գրի համակարգ կամ փիլիսոփայական ուղղվածություն, որից բխում են բոլոր այն իրավունքները, որ հապուկ են մարդկանց այդ խմբին:

«Ավարտացած եմ, որ գլոբալիզացիայի համարեքսպում բնիկ մշակույթների քայլայման առաջին ազդեցությունը միօրինակությունն ու միաբարբությունն է: Մարդինիկցի մեծ բանասրեղծ եւ քաղաքական գործիչ Էյմի Սեգարը (1913-2008) սպեղծեց նոր եզրույթ՝ «պարմական իրավունքներ», որպեսզի աշխարհի ուշադրությունը իրավիրի բնիկ ժողովուրդների իրավունքների վրա:

ԶԵՂԻ ՄԱԶԻԱ

«Մետության» գաղափարը, որ նա հորինել է, մեզ զարմանալիորեն սովորեցրել է վերակենդանանալ՝ վերականգնելով մեր «պապմական իրավունքները»: Այս գաղափարն այն հիմնական գեսական հասկացություն է, որի վրա հիմնվում է աֆրիկյան եւ, անշուշփ, աշխարհի արշավը հանուն արդարության եւ հավասար կարգավիճակի: Մենք պիփի գործողություններ կարարենք՝ ի պաշտպանություն մշակութային բազմազանության: Անշուշփ, նոր դարը սկսվում է համաձայնությամբ՝ բարոյական սկզբունքով, որ կիսում են բոլոր քաղաքակիրթ հասարակությունները, այն է՝ յուրաքանչյուր էթնիկ խմբի, ազգի, ռասայի կամ կրոնի մշակութային շարունակությունը հենց ինքնամաքրման ակր է հանուն մարդկության, որովհետեւ փարբեր արժեքային համակարգերի եւ մշակութային ավանդույթների հանդեպ պարզած հարգանքը կամ ըմբռնումը, ցավոք, բացակայում է:

Այսքեր պեքը է նշեմ, որ յուրաքանչյուր բնիկ բանասիեղծ իր ներսում կրում է հոգեւոր եւ մշակութային իմացություն, որը փեղեկություններ է հաղորդում նրա բանագրեղծական արդարականացմանը ուղղությունուն: Այն մարդուն փալիս է ուժ ու ավելի սրություն է հաղորդում գրին, քան ազքին կամ ականջին: Այս սրությունն ընդգծում է համաժամանակացման բացակայությունը «քաղաքակրթության» եւ «հասարակության» միջեւ, ինչը ճակարագրական է: Այն բացահայփում է նրա ամենավագ կողմը, այն է՝ շարունակվող աշխարհաքաղաքական ճգնաժամն ու նրա մշակութային հակասությունը: Մեր առաջ մռայլ հեռանկար է փոքրամասնություններին բաժին է ընկել անընդմեջ ենթարկվել փորձարկումների, բախվել «նոր աշխարհի կարգի» հետ, դառնալ հոգեւոր փարազիրներ, որոնք արհամարհվում ու անփեսվում են համաշխարհային շահերի բախման մեջ, դուրս են մնում համաշխարհա-

յին շուկայի սահմաններից, հյուծվում աղքափությունից:

Որպես եզրափակում՝ մեր փորձն այս երիգասարդ դարաշրջանում հուշում է մեզ գդնել մեր մարմինն ու հոգին, որ նեփել են թորանոթ ու այնպեղ դրորում, վերափոխում ու կոփրում են: Վյո պարճառով էլ վսպահ եմ, որ մենք բոլորս հակայական պարախանափվություն ունենք մարդկության առաջ ներկա ժամանակներում, ժամանակներ, որոնց հագուկ են փոփոխությունները, կորուսպը, հիշողության բացակայությունը, արտաքսումը, ազդեցությունն եւ հրաժարումը: Ողջ հոգեւոր ժառանգությունը, որ սպացել ենք եւ ներկայացնում ենք այսօրվա թեմայի համապերսպում, վսպահեցնում է մեզ, որ ճիշդ ժամանակն է բանասպեղծական ծաղկման ալիք բարձրացնել՝ ի պաշրպանություն կյանքի

ՀԱՎԵԼՎԱԾ



ԶԻԴԻ ՄԱԶԻԱՅԻ
ԵՎ ՆՐԱ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Դավատքի համակարգի հեռանկարը
ժամանակակից աշխարհում
Անգլերեն թարգմանչի խոսքը**

Երբ ես պատրաստվում էի անգլերեն թարգմանել Զիդի Մաջիայի բանաստեղծությունները, բախտ ունեցա բանաստեղծի հետ ճանապարհորդել նրա հայրենի Լյանգշան Յի ինքնավար մարզում, որը գտնվում է լեռնային արեւմտյան Սիչուանում: Մեկուսացած Նյուոսուի գյուղերից մեկում՝ Բյութուոում եւ ժառջու կոմսություններում ես շատ տպավորված էի Նյուոսուի լեռնային ժողովորդի նվիրվածությունից, իրենց՝ դարերով սրբագրծված սովորությունների պահպաննամբ: Կավից ու ծղոտից պատրաստված հին տների կողքին տեսնում էի նորերը. դրանք փոքր կառույցներ էին՝ խումբ-խումբ տեղակայված արոտավայրերի ու պարտեզների մեջ: Նյուոսուի կանայք, փոքր խմբերով նստած իրենց տների առջեւ, գործվածքներն ուսերին՝ ժապավեններ էին հյուսում դրանց վրա: Ես տեսա տղամարդկանց, ովքեր կրում էին ձեռագործ, բրդյա սեւ թիկնոցներ՝ բոլիվիական հնդկացիների թիկնոցների ոճով:

Յին Նյուոսուի առավել խիտ բնակեցված տարածքն է: Յի ցեղն ունի յոթ միլիոն բնակիչ, որոնցից մի քանի միլիոնը խոսում է սեփական լեզվով: Այն պատկանում է տիբեթա-բարմանյան լեզվաշնուրանիքին: Նրանք ապրում են բունկերներում՝ հարավարեւմտյան Չինաստանի Սիչուան, Գայժոուն եւ Ցունան նահանգներում:

Նյուոսուն ունի իր սեփական դիցաբանությունն ու ժողովրդական բանահյուսությունը: Նա ունի իր բանավոր ոյուցազներգությունը՝ «Գիրք Ծագմանն» ու «Ժայդ Ալուն»: Ունի նաև պաշտամունքի համար տոհ-

մական մեծ թռչուն, որն ինձ հիշեցնում է Տիբեթյան Գարուղային: Նյուտոնուցիներն հաճախ են այդ թռչունը պատկերում արծաթի վրա: Նրանք ունեն իրենց սեփական Սուլր Գիրքը, որով մահից հետո արձակվում են հոգիները: Բիմոն՝ ծիսակատարը, Սուլր Գիրքը կարդալու ընթացքում թափահարում է աղոթքի գավազանը եւ աղաղակում կրակի ծխի միջից: Կրակի ծուխը նրա խունկն է: Բիմոյի աղոթքի գավազանը նման է ծուխ ներշնչող թռչնի: Բիմոն Սուլր Գիրքն ընթերցելիս նստում է ոչ թե տաճարում, այլ՝ դրսում փոված խսիրի վրա: Սուլր Գիրքը գրված է պատկերագրային ձեռագրով, որը նման չէ չինական գրերի համակարգին:

Եթե ցանկացած պահի լինես Նյուտոնի գյուղերից մեկում, անշուշտ, կտեսնես Բիմոյին, ով կրում է սեւ փետրավոր՝ թունավոր սնկածեւ գլխարկ: Երբ Բիմոն ծիսակատարություն չի անում ապաքինման կամ թաղման համար, ապա նա հեռանում է գյուղի ծայրամասում գտնվող հանգիստ վայրը: Երբեք չես կարող գուշակել, թե որտեղ կարող ես հանկարծակիորեն հանդիպել Բիմոյին: Նրա կողքին հաճախ կանգնած է լինում դպիրը, ով սպասարկում է կրակը: Սուլր Գիրքը գրված է պապիրուսանման նյութի կամ ոչխարի բարակ կաշվի վրա: Դանդիպում ենք նաեւ քահանայի մի ուրիշ կերպարի՝ սանիին, ով կոչվում է նաեւ շաման: Նա հարվածում է մեջքից կախված թմբուկին եւ, ժամերով նստած, երգում խոր զմայլանքի մեջ: Երբեմն էլ խճում է իր երկար մազերը:

Նյուտոնի մարդիկ չեն ընդունում դրսից մուտք գործած կրոնը: Նրանց հավատքի համակարգն ունի յուրահատուկ բարդություն: Այն իր մեջ ներառում է հնագույն ժամանակներից հասած ծիսակատարություն, Սուլր նախնիների մասին ոյուցազներգություններ եւ

բնության հոգիների մասին պատմություններ: Նրանց հավատալիքներից զգում ես նրանց կախվածությունը բնական միջավայրից:

Պոետ Զիդի Մաշիան Նյուոսուի աղիստոկրատական ընտանիքից է: 1949 թվականին նրա հայրը Նյուօսուի կենտրոնի՝ Բյութուո կոմսության դատական համակարգի առաջին դեմքերից էր: Զիդի Մաշիան պոետի կոչման էր արժանացել Վաղ հասակում, երբ Պուշկինի ստեղծագործության չինական տարբերակը նրա ձեռքն ընկավ: Նա արդեն վաղուց որոշել էր իր կյանքի ուղին՝ Նյուօսուի ինքնությունն ու աշխարհայացքը մարմնավորել պոեզիայով:

Տասնյոթ տարեկանում Զիդի Մաշիան ընդունվեց Շենգուի հարավարեւմտյան ազգությունների քոլեջ: Այս տարիների ընթացքում էլ նրա տոչոր միտքը ներծծվում էր Նյուօսուի դյուցազներգությամբ ու ժողովրդական բանահյուսությամբ: Նա ընթերցում էր նաև չինական գրականության մեջ ստեղծագործությունները՝ Բյու Յանի՝ առասպելներով հարուստ հնագույն պոեզիայից մինչեւ քսաներորդ դարի՝ տեղական բարբառով ստեղծագործող արձակագիրների գործեր: Բանաստեղծի ուշադրության կենտրոնում էին նաև համաշխարհային գրականության այնախսի դեմքեր՝ որպիսիք են Միխայիլ Շոլոխովը, Ֆեոդոր Դոստուևսկին:

Քոլեջն ավարտելուց հետո՝ Զիդի Մաշիան վերադառնում է հայրենիք: Նրա բանաստեղծությունները շուտով գրավում են ամբողջ նահանգի ուշադրությունը՝ տպագրվելով Սիչուանի «Աստղ» հանդեսում: Երկար ժամանակ պոետը վարձատրվում էր Սիչուանի գրողների միության կողմից, եւ նրա դիրքը գրողների միությունում մշտապես աճում էր՝ մինչեւ կազմակերպության քարտուղար: 1986 թվականին նա բարձրա-

ցավ ազգային թեմահարթակ՝ արժանանալով ազգային պոեզիայի մրցանակին, եւ դարձավ տարեց, հարգարժան պոետ Քինզի հովանավորյալը: Նրա ուշադրության կենտրոնում էին համաշխարհային գրականության այնպիսի դասականներ, որպիսիք են՝ Մարտին Պասը, Վալեջո Սուլ Մինչոն, Պարլո Ներուդան, Գարսիա Լորկան, Յարոսլավ Սեյֆերտը, Վիլավա Շիմբռուսկայան, Լեոպոլ Սեդար Սենգորը:

Զիդի Մաջիան իր կոչմանը՝ բանաստեղծություն գրելուն հավատարիմ, աշխատում էր առանց որևէ խրախուսանքի: Լինելով գրողների միության անդամ, նա հնարավորություն ունեցավ մասնակցել միջազգային գրական համաժողովների: ԱՄՆ երիտասարդ առաջնորդների միջազգային կոնգրեսի ծրագրի շրջանակներում Մաջիան մեկ ամսով հրավիրվեց ԱՄՆ՝ ներկա գտնվելու կառավարական որոշ գործընթացների ուսումնասիրմանը:

2007-2009 թթ. Զ. Մաջիան նախաձեռնեց Ցինհայի միջազգային պոեզիայի փառատոնը, որն արձանագրեց մեծ հաջողություններ:

Մաջիան երբեք չդադարեց լինել այն, ինչ՝ է. Նա մեծ անհատականություն է, ով հայտնվեց հարավարեւմտյան Չինաստանի փոքրարիվ տեղաբնիկների մեջ ու կամուրջ հաստատեց իր՝ մարդկանց բարոյաբնույթի ու արտաքին աշխարհի հրականության միջեւ: Պոետի համար իր ինքնությունը՝ որպես նյուտոնի բնակիչ, որպես չինացի եւ որպես աշխարհաքաղաքացի, դրսեւուելու ծրագիրը գտնվում է իրարամերժ ճանապարհի վրա:

Նյուտոնը հպարտ ժողովուրդ է, ում անցյալն ընկած է Սինիթիքի մշակույթի սահմաններում: Երկար ժամանակ լինելով Սինիթիքի մշակույթում՝ նյուտոնցիները չծովվեցին, այլ պահպանեցին չինացիություն բնորո-

շող յուրահատուկ տարրը:

Հան եւ Նյուտոն մշակույթների փոխազդեցություն-ների շնորհիվ նրանք ունեցան միասնական երաժշ-տություն, ժողովրդական արվեստ, առասպելաբանու-թյուն:

Զինարեն ստեղծագործող, Նյուտոնի պոետ Զիդի Մաջիան ինձ հիշեցնում է իռլանդական գրողի, ով հայտնվել է անգլիական գրականության մեջ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին: Իռլանդական պոետներն ու գրողները գրական անգլերենը դարձրին կենսունակ: Իրենց սովորությներին հավատարիմ՝ գրականությանը պերճախոսության շուրջ հաղորդեցին Բեռնարդ Շոուն, Օսկար Ուայլդ, Ջեյմս Ջոյսը, Սամու-ել Բեքտոֆ:

ԱՄՆ-ից նույնպես կան էքնիկական խմբերի օրինակ-ներ, ովքեր իրենց պատմական դիրքով ներազեցին գրական արտահայտչականության վրա: Օրինակ, սեւամորթ ամերիկյան գրողներ Լենգությոն Ջյուզը եւ Ռալֆ Էլիսոնը, ինչպես նաև՝ իրեական համայնքից ներգաղթած՝ հսահակ Մինգերը եւ Սոլ Բելլոուն: Բոլո-րովին վերջերս լսելի դարձան ամերիկացի գրող Շեր-ման Ալեքսի եւ էքնիկ չինացի, ներգաղթյալ՝ Լի-Յանգ Լիի հզոր ձայները:

Անակնկալ չեր իմանալ, որ Զիդի Մաջիան սերտ կա-պի մեջ է Ամերիկայի՝ Հարլեմի վերածննդի դեմքերի հետ: Միայն հզոր հոգի ունեցող բանաստեղծը կարող է հաջողության հասնել Լենգությոն Ջյուզի նախագծում՝ ժամանակակից մշակութային չափանիշներով վերա-կենդանացնել ժողովրդի ինքնությունը: Հարլեմի վե-րածննդի դեմքերի ձայները աստիճանաբար են լսվել եւ ընդունվել մշակութային գերիշխող հոսքերի կող-մից: Այսպիսին է նաև Զիդի Մաջիայի առաքելությու-նը՝ որպես պոետի: Նրա կապվածությունը Հարլեմի

դեմքերի հետ կրում է նաև խորհրդանշական բնույթ՝ հիմնված սեւամորթության երեւույթի վրա: Նյուտոնի բազմամարդ Յի ցեղատեսակի ներկայացուցիչները իրենց լեզվով կոչվում են «սեւ մարդիկ»: Նրանց սուրբ մարդիկ կրում են սեւ գլխարկներ եւ թիկնոցներ: Այդ սեւ ֆոնի վրա ընդգծվում են կարմիր եւ դեղին դեկորատիվ նախշերը: Մի բանաստեղծության մեջ Զիդի Մաշիան ասում է.

«Ես բանաստեղծություններ եմ գրում, որովհետև կարծում եմ, որ մեր ինքնաճանաչողական ու խորհող ցեղը արտաքնապես ցույց է տրվում մելամաղձոտ գույններով: Երկար ժամանակ այս գույնը խորը թաքցած էր մեր հոգիներում»:

Սեւ գույնը զգացնումքային մթնոլորտի խորհրդացի է, որը ցույց է տալիս տառապանքի ու մահվան առկայությունը, այն նաեւ հոգեւոր գիտելիքների ու խորության գույնն է:

Պատմության ընթացքում Նյուտոնի եւ Յան ու Տիբեթյան հարեւանների միջեւ եղել են ընդհարումներ, որոնք հաճախ, բարեբախտաբար, լուծվել են խաղաղ ճանապարհով: Նյուտոնականների մոտ վերջին ժամանակներս դիտվում են ազգային սովորություններից հեռանալու միտումներ, որոնք, անշուշտ, արոփականցման կողմնակի բարդությունների ազդեցություններ: Սա Նյուտոնի տիխորության բեռի մի մասն է՝ շրջապատի հետ ներդաշնակության կորստի, որ հիմնականում զգացվում է ավանդական հավատքի ու արժանիքների կապվածության պատճառով:

Զիդի Մաշիան ընդունում է, որ տառապանքը մարդկային կենսապայմանների մաս է կազմում. այն ընդգծված է մելամաղձոտ գույնով, որում, սակայն, հակադրություններով հայտնվում է ստեղծարար ինքնապար-

տահայտման հոլյսով լեցուն պատկեր: ճգնաժամում գտնվող ժամանակակից աշխարհի մասին իր բանաստեղծություններուն նա դատապարտում է բռնությունը, բայց նաև՝ չի ձգտում իրար կապել մեղքն ու հատուցումը: Տառապանքների հանդեպ գրողի վերաբերմունքը կարելի է տեսնել Չոնգքինգի ժողովրդին նվիրված նրա գովքում.

...հզոր քաղաքն այս
Ինչպես իր բարի մեծահոգի մարդիկ
Միշտ նայում է դեպի պայծառ ապագա
Երբեք չի ձգտում վրիժառության
Այս քաղաքը ռեֆլեկտիվ վերաբերմունք ունի պատերազմի հանդեպ.
Ու փափազը խաղաղության
Ոչ այլ ինչ է քան այսօրվա Չինաստանի
Պատասխանը աշխարհին...
(ԵՍ ԽՈՍՏՎԱՆՈՒՄ ԵՍ ՈՐ ՄԻՌՈՒ ԵՍ
ԱՅՍ ՔԱՂԱՔԸ)

Պոստմոդեռն այս համատեքստում զարմանալի չէ, որ աշխարհահռչակ բանաստեղծը հայտնվել է մեկուսացված՝ հարավարեւմտյան լեռնային Չինաստանի փոքրամասնությունից: Ի վերջո, ամեն արտառոց բան արդեն տեղի է ունեցել 20-րդ դարի իրականության մեջ: Պատմությունը ցույց է տվել, որ քաղաքակրթությունը ստեղծում է գաղափարների մի համակարգ, եւ որոշ հիմնական կատեգորիաներ ազդարում որպես ճշմարտության չափանիշներ՝ Աստված, Բուդդա, Դաո, իդեալների թագավորություն, գոյության հող, նյութական ուժ: Մրանք այնպիսի գաղափարներ են, որոնք հակված են իրար ժխտելու կամ մեկը մյուսին ոչնչացնելու: Ի տարբերություն այսպիսի միասնական գաղափարների համակարգի, տեղաբնիկների մշակույթն

ունի դեռ կենդանի առասպելմեր, որոնք նույնիսկ զարգացման հեռանկար ունեն: Տեղի մշակույթն ունի զգացմունքային կապվածություն առ բնությունը: Նրանք ուշադիր են բնական շրջապատի փոփոխությունների հանդեա:

Դժբախտաբար, հիմնական գաղափարները, որոնք արժեքավոր են քաղաքակրթության համար, հեռու են բնությունից: Երբ Վտանգն ու անհեթեթություններն ազդուն են քաղաքակիրթ մարդկանց վրա, ճգնաժամը ճգնաժամի հետեւից է գալիս, նրանք մտածում են, որ ժամանակն է փոխելու իրենց գաղափարների համակարգը: Բայց վերափոխելը ևս մի այլ անհեթեթություն է, որն ընդամենը երկարաձգում է երկիր մոլորակի՝ կյանքին ուղղված հարցերի շարանը: Տեղաբնիկների հավատքի համակարգը չի ստիպում անհանգստանալ՝ ինչոր բան փոխելու համար: Նրանց անկեղծ հավատքի կառույցը ներառում է մի չափաբաժին թերահավատություն: Նրանք հարգանքով ու երախտագիտությամբ են վերաբերվում բնությանը: Նրանք կարող են ընդունել իրենց իսկ հավատալիքները՝ առանց վստահության: Երբ ես ընթերցում եմ Զիդի Մազհայի բանաստեղծություններից, տեսնում եմ տեղաբնիկների հավատքի համակարգի հեռանկարը ժամանակակից աշխարհում:

Երբ նույնիսկ տեղաբնիկները անտուն մնան, նրանք չեն հրաժարվի իրենց մտադրությունից, քանի որ ողջ սերնդի կյանքի շարունակությունն արժեքավոր է նրանց համար: Այս թեման Զ. Մազհայի բանաստեղծություններում դիտվում է տարբեր տեսանկյուններից: «Արև» բանաստեղծության մեջ նա գրում է.

*Արևին նայելով՝ նա միշտ ինձ ստիպում է
Կարուտել իմ կյանքից առաջ գտնվող*

մարդկանց

Ովքեր մի ժամանակ կարողացել են զգալ
ջերմությունն այս

Ու այլևս չկամ այս աշխարհում

Երբ նույնիսկ հատուկ ավանդական սովորույթները
դադարում են գոյել, այդ ժառանգվող արժեքներին փո-
խարինելու են գալիս առասպելական նախնիները:
Այսպիսով՝ Զ. Մաջիան գրում է.

ժամանակն ունի ճառագայթներ լուսավորելու
անհետացող գետը

Ինչպես հեծյալների խումբը կմոտենա
երազանքի եզրին
Թամբերի արձաքափայլ պայծառությունը

անհետանում է
Բառաշարի մեջ, այնժամ ես տեսնում եմ նրանց
Մեծերին ու ինաստուններին մենք չենք
արդարացնում մոռացության համար
իրականում նրանք այս երկրի ծշմարտությունն ու
արժանապատվությունն են

Ես կրկին մտածում եմ չապրել հիշելով
կորուստները
Պարզապես մարդ լինելով ես կանչված եմ
Թեթևացնել անցած գեղեցիկ բաները
(ՇԻԿՆԱԾ ԱԾՈՒԽ ԲՈՒԽԱՐԻՈՒՄ)

Սա առողջ արձագանք է մշակույթը կորցնելու մտա-
վախության հանդեպ: Կորստի նոխրից պոետը, առն-
վազն, հստակ կանխատեսումային պահերով կարող է
փրկել մշակույթը՝ լուսավորելով իր հետնորդների ճա-
նապարհը:

Ղենիս ՄԱՅՆ

Պոեզիան՝ Զինաստանի մշակութային վերածննդի գործիք եւ վկա

Մարդիկ, իոդ ու մոխրի եւ ամեն ձեւի մարդիկ, գործառի
ու ժամանցի մարդիկ, մերձսահմանային եւ այլուստեք մար-
դիկ, այս բոլոր վայրերի հիշողության մեջ, կիրճերի ու հովիտ-
ների, նաև մարդիկ՝ աշխարհի ամենաբարձր զառիվայրների
վրա՝ մեր ափերի պայմանաժամին, նշան ու սերմ հոտոտող-
ներդ, խոսովվանահայրերդ Արեւմտյան քամիների, հետքերի
ու սեղոմմերի հետեւորդներդ, ճամբարմեր ամբառնողներդ
արշալուսի սյուքերի մեջ, օ՝, Երկրակեղեւի վրա ջրակետեր
որոնողներդ, օ՝, այլուր հեռանալու համար պատրվակ փնտ-
րող ու գտնողներդ, դուք չեք շահարկում առավել ուժեղ աղ,
երբ առավոտյան, աշխարհի ծովսերից բարձրորեն կախված
մեռյալ ջրերի եւ արքայությունների նախանշանների մեջ,
աքսորի թմբուկներն արթնացնում են սահմաններում հա-
վերժությունը, որն հորանցում է ավագների վրա¹:
Սեն-Ժոն Պերս. Անարասիս

18-րդ դարի հին ֆրանսիական դարձվածքը, որն
իրականում վշտի փոխաբերություն է, ասուն է, որ մար-
դը կարող է «քարերի պես թշվառ» լինել: Զիդի Մաջի-
այի ստեղծագործություններն ուսումնասիրելով՝ ըն-
թերցողը կկասկածի, որ քարերն իսկապես դժբախտ
են: Սա ճիշտ է, որովհետեւ այս չինացի բանաստեղծի
ու Յի ժողովունից սերած կառավարական բարձրա-
գույն պաշտոնյայի հեղինակած էսաներն ու ելույթնե-
րը ենթադրում են առողջ հարաբերություններ մարդու
եւ բնության միջեւ: Այնուամենայնիվ, իրականում այս
համերաշխությունը ձախողված է, հատկապես արեւ-

¹ Սեն-Ժոն Պերս, Գովհակըներ: Անարասիս, Ֆրանս. քարզմ.
Աննա Հակոբյան, Ե., ԱկՍ, 1995, էջ 63:

մուտքում, եւ այն պետք է վերականգնվի, որովհետեւ սարսափելի վնասներ է կրել դարեր տեւած միակողմանի զարգացման հետեւանքով, երբ մարդն իրեն հայտարարել է իր բնակեցրած Երևիր մոլորակի տեր ու տիրակալ: Արդյունքը օտարացած մարդկությունն է, որ կուրացել է եւ չի տեսնում մեր մոլորակի գեղեցկությունն ու իր բոլոր արարածների միջեւ անհրաժեշտ հավասարակշռությունը:

Կարելի է կարծել՝ փիլիսոփա եւ գրաքննադատ Գաստոն Բաչելարը մոտիկից ճանաչում էր Յի ցեղի աշխարհը, որը զարգացել է Յին աշխարհի ավագների, ալքիմիկոսների կամ արեւմտյան Սիչուանի ցեղի կախարդների նկարագրած չորս տարրերի շուրջ, երբ գրում էր սա. «Երազելը չորս կողմ ունի, չորս կետ, որտեղից սավառնում է դեպի անսահման տարածություն: Իսկական բանաստեղծի գաղտնիքը բացահայտելու համար մի բառը բավական է. «Ասա ինձ՝ որն է քո ուրվականը: Թզուկն է, սալամանդրը, ջրահարսը, թե գեղեցկուիին»:

Զիդի Մաջիան անկասկած չորս տարրերի բանաստեղծ է. նա մեծացել է Դալիանգշանի սարերում՝ Սիչուանի հարավ-արեւմուտքում, Նյուոսում՝ Յի ազգային փոքրանասնության մի ճյուղում: Նա ճանաչում է այս բնիկ մշակույթը, որտեղ մարդիկ պահպանել են հաղորդաբար բնության հանդեպ, հատկապես արեւմուտքիների համեմատ, որոնց մտածողությունը ձեւավորվել է Լուսավորության ազդեցության ներքո: Յի ցեղախումբը չի կիսում էնցիկլոպեդիստների տեսակետը, որոնք փառաբանում են բանականության հաղթանակը եւ այսպես կոչված կախարդանքի անհետացունը:

Անկասկած, այս աշխարհիկ աստվածուիին՝ Բանականությունը, սխալվում է, երբ մարդ արարածներին

ընդունում է ոչ միայն որպես բնական աշխարհի բնակիչներ, շատ ուրիշների նման արարածներ, այլ նվաճողներ, որոնք իրավունք ունեն հնազանդեցնել գաղաներին, արհամարիել ժայռերը ու ոչնչացնել անտառները: Երբ Զիդի Մաջիան իր պոեզիայում ու Ելութերում խոսում է երկրի, իր մանկության վեհապանձ բնապատկերների, անտեսանելի ուժերի կողմից բնակեցված ամայի վայրերի անկախության հանդեպ իր սիրո մասին, մտածում ես միայն զբոսաշրջիկ, թափառաշրջիկ, տարագիր Արտոնեն Արտոյի մասին, որը գրել է հյուսիս-արեւմտյան Մեքսիկայի մեկուսի սարերի մասին.

Գուցե ես էլ ծնվել եմ տանջված ու ձեւափոխված մարմնով, ինչպես հսկայական սարը. բայց այդ մարմինը մեկինն էր, ում գաղափարները գուցե օգտակար կլինեն. սարի վրա մտածեցի, որ գուցե օգտակար կլինի, եթե հաշվեմ: Ստվեր չկար, բայց ես հաշվեցի այն, երբ զգացի, որ ստվերը թեքվում է, կախվում ինչ-որ բանի վրա. հաճախ պատահում էր, որ այս ստվերներն իրար միացնելով՝ ես հասնում էի տարօրինակ ընտանիքների մոտ:

Զիդի Մաջիայի ստեղծագործությունները նաեւ բացահայտում են հասարակական խնդիրների շուրջ նրա մեջ մտահոգությունը: Նա անհանգստանում է ազգային փոքրանասնությունների ինքնության կորստով գլոբալիզացված աշխարհում, որը ձգտում է վերացնել տարբերությունները՝ առաջարկելով միայն մեկ հիմնական ձեւաչափ, այն է՝ նոր-ազատական արդիականությունը: Նա մտահոգվում է բազմազանության բոլոր ձեւերի քայլայումով՝ կենսաբանական, լեզվաբանա-

կան, մշակութային, ռասայական, կրոնական թե փիլիսոփայական: Այս իմաստով, Զինաստանն այսօր կանգնած է հսկայական մարտահրավերների առաջ: Յեղինակը կրկին ու վերստին նշում է այն դժվարությունները, որոնց երկիրը կբախվի համաշխարհային քատերաբեմում հայտնվելու (թե' տեղական, թե' միջազգային), այնտեղ մուտք գործելու անակնկալ գործընթացում: Լատ Ցզիի հայրենիքն այսպիսով հաղթահարել է գրեթե անհաղթահարելի խոչընդոտները: Այն պիտի լուծի այնպիսի փշոտ հիմնախնդիրներ, ինչպիսիք են շրջակա միջավայրի քայլքայումը եւ ինքնության խնդիրները: Դրանք առկա են այս աղքատացած տարածաշրջանում՝ Ցինհայում, նախկին Ամդո նահանգում, որը Տիբեթի հետ կիսում է Զինաստանի արեւմտյան կեսը զբաղեցնող բարձրավանդակը, եւ որտեղ Զիդի Մածիան աշխատում է՝ որպես մշակութային կազմակերպիչ: Ինչու⁶ հեռավոր տարածքները, մյուսների նման, չեն կարող երազել հարմարավետության մասին: Ինչպես հեղինակը մատնանշում է, 21-րդ դարում Զինաստանը կկանգնի խոշոր մարտահրավերի առաջ. պահպանել նույր հավասարակշռությունը այն դեպքում, երբ ավանդույթը պարուն է արդիականության ցատկապարանի վրա:

Զինաստանի մշակութային միջավայրի, պոետիկայի, չափազանցության, աշխարհագրության, էկոլոգիայի, ռեսուրսների ու քաղաքականության վրա ազդող վերջին փոփոխությունների մասին նտքերի այս խճանկարում Զիդի Մածիան ուսումնասիրում է գրականության դերն ու առասպելների կարեւորությունը ժամանակակից աշխարհի քառոսում: Նա հարցնում է զարգացման ներկայիս մոդելների շարժառիթների մասին, որոնք մոլեգնում են հողմապտույտում, եւ նպատակ ունի ներկայացնել նրա վտանգները: Նա ընթերցողին

տանում է տիեզերական ուսմնասիրությունների իր աշխարհը, գրքերի հորձանուտ, նրա հետ կիսում իր գրական նախապատվությունները: Նա երախտագիտությամբ ու կարոտաբաղդությամբ է խոսում պոեզիային իր նվիրման, մեծ ռուս վարպետների չափածոյի եւ արձակի հետ առաջին շիման մասին: Դիանում է Լեռապարդիով եւ գրական դեմքերով, որոնց օգնությամբ մանդարին լեզուն փայլեց իր ողջ շուքով: Նա միշտ մտերմիկ երանգով նկարագրում է այսպես կոչված սեւամորթների գրականության եւ լատինամերիկյան մոգական ռեալիզմի իր բացահայտումները, գովերգում է այս գրական դպրոցների առաջնորդներին եւ խոսում է նրանց ու իր ոճի ընդհանրությունների մասին; Նա, անշուշտ, համաձայն է այն գրողների հետ, որոնք փառաբանում են արվեստի քաղաքակրթական դերն ու նրա արժեքը՝ որպես ինքնության գործիք: Նա ընդգծում է պոեզիայի, ծեսերի ու հեքիաթասացության կարեւորությունը մարդկության գեղագիտական կրթության մեջ:

Զիդի Մաջիան խաղաղասիրական ուսմունքի հետեւորդ է, ինչն այնքան բարդ է պահպանել մի աշխարհում, որը կեղեքվում է ատելությունից, պատերազմներից ու բախումներից: Նա դատապարտում է բռնությունը, շահագործումը, անարդարությունը, ճնշումները, ռասիզմը, ագահությունը, շահույթի չափազանց մեծ գայթակղությունը եւ աճող աննարդկայնությունը: Նա դատապարտում է խորհրդածության, ոգեկոչման եւ ներքին կյանքի պակասը, որ մեր օրերում սպառնում է մարդկությանը: Նա իր ձեւով է ամփոփում Արտոյի կարծիքը. «Մարդն ավելի երջանիկ է, երբ պատկանում է անսահմանությանը, քան իրեն»:

Իր ելույթների միջոցով Զիդի Մաջիան մեզ ներկայացնում է գերակա ավանդությներով ապրող երնիկ

խումբը: Նրա ստեղծագործությունները սիրո հռչակագիր են առ այն վայրը, որը նվաճել է հայրենիք անունը: Սրբության գաղափարը, Յի ցեղի ջուլհակուհիների օգտագործած հիլկի հանգույն, դանուալ ետ է պտտում թելը նրա բանաստեղծությունների ու ելույթների միջոցով: Տեղի հողը, որ ներծծված է հոգեպաշտական հավատալիքներով, սրբանում է, որովհետեւ ճակատագիրն այն ընտրել է որպես նրա ծննդավայր: Այս վայրը՝ Ցինհայ նահանգը, տիբեթյան բուդդիզմով տոգորված հարուստ մշակույթի շնորհիվ նաեւ պաշտամունքի առարկա է Զիդի Մաջիայի համար: Բանաստեղծը գովերգում է տարածաշրջանը իր մոգական ամայի տարածությունների համար, որոնք մեկուսացման շնորհիվ հնարավոր է եղել մասամբ պահպանել:

Այս տեքստերը կարդալիս կարելի է, օգտագործելով Արտոյի հնարած արտահայտությունը, հեշտությամբ պատկերացնել «Երկիր, որտեղ եռում են անդրաշխարհի աշխույժ ուժերը, որտեղ թռչուններով լի օդը թրռում է ավելի մեծ բարձրության վրա, քան այլուր»: Սա կորած դրախտավայրն է, որ Լե Կլեզիոն հիշատակում է Արտոյի մասին խոսելիս, որը, ուղեւորվելով դեպի Զիհուահուա մեկուսի լեռնաշղթա, ասել է, որ «հասկացել է մի բան, որ մինչ այդ հասու չի եղել (իրեն)»: Սակայն Զիդի Մաջիան երբեք տպավորություն չի թողնում, որ դժգոհ է հնագույն ցեղում ծնված լինելու համար: Դակառակը, նա սնունդ է առել հենց այն մշակույթից, որին պատկանում է: Դրան թիկունք դարձնելու փոխարեն նա, որպես թե՛ ավանդական, թե՛ ժամանակակից մարդ, շատ հստակ բարձրացնում է բնիկներին հատուկ տեսակետներ, ինչպես նկարագրում է Լե Կլեզիոն, երբ խոսում է «նոր երկրի երազանքի մասին, որտեղ ամեն ինչ հնարավոր է, որտեղ ամեն ինչ եւ՝ շատ

հին է, եւ՝ շատ նոր: Կորուսյալ դրախտի երազանքը, որտեղ աստղերի գիտությունը եւ աստվածների մոգությունը միաձուլվում են: Երազանքներ՝ քաղաքակրթության ու իմացության ակունքներին վերադառնալու մասին»: Սա է Յի ժողովրդի ներկայացուցչի ցանկությունը, որն անվերապահ սիրում է Մայր բնությունը:

Հնարավոր չէ խոսել Զիդի Մաշհայի մարդասիրության, նրա զգայունության եւ գրականության նպատակներին նրա աներեր նվիրման մասին՝ առանց հիշատակելու նրա ելույթները մանդարինից անգլերեն թարգմանող Հուանգ Չառ Շենգին: Կենտրոնական Չինաստանում՝ Հուբեյյում ծնվելով՝ բարձրագույն դպրոցն ավարտելուց հետո նրան, ինչպես իր սերնդի հազարավոր գործազուրկ երիտասարդների, ուղարկում են գյուղ՝ հեղափոխական գյուղացիների մոտ կրթություն ստանալու: Հենց այս ժամանակ էլ նա սկսում է անգլերեն սովորել որոշ կալանավորների օգնությամբ: Այս յուրահատուկ ուսումը նշանավորեց գրականության, փիլիսոփայության, պատմության ու թարգմանության հանդեպ մեծ սիրո սկիզբը:

Մշակութային հեղափոխությունից հետո (1966-1976 թթ.) նա սովորել է Չանհայի Օտար լեզուների ինստիտուտում՝ երկրի լավագույն լեզվական դպրոցներից մեկում: 2008 թվականից թարգմանություն է դասավանդում Ցինհայի բարձրագույն ուսումնասիրություների ինստիտուտում, որը Շինհնգում է՝ նահանգի մայրաքաղաքում: Հրապուրիչ լեզվով, դասական ոճով, որտեղ ցանկացած խորաթափանց ընթերցող կնկատի հարուստ բառապաշարը, նա փոխանցում է Զիդի Մաշհայի՝ գիտության եւ ուսման հանդեպ բուռն սերը: Նա ներկայացնում է Զիդիի խանդավառությունը այն հոգեւոր ջանքերի նկատմամբ, որոնք, ինչպես Ար-

տոն էր ասում, «կախարդում են մեզ, որովհետեւ մեր
մեջ արթնացնում են ատավիստական պատկերերի
փայլուն խումբ, որոնք ծնվել են մարդկության առաջին
դարերում»:

Ֆրանսուա ՌՈՅ
Գուաղալաջարա, Մեքսիկա

Բանաստեղծ եւ մշակութային գործիչ

Զիդի Մաջիայի գործերի հիմքում նրա ժառանգության ու բանավոր ավանդույթների հյուսվածքն է, որ սերնդեսերունդ փոխանցվել է իր հայրենի Յի ժողովրդի և լյուսու տոհմի կողմից: Այն ներկայացնում է անցած-զնացած ժամանակների պատկերը, բարելավման ու ինքնակրթության տենչը, բայց երբեք չի նորանում իր ժառանգությունը, արմատներն ու մշակութը:

Նրա աշխատանքները պատկերում են մի մարդու կերպար, որն առաջնորդվում է բնածին ինացության եւ իմաստության հանդեպ սիրով, չնայած Մաջիայի միջազգային կարգավիճակին ու համրածանաչությանը: Նա մարդ է, ով երբեք չի հեռանում իր ավանդույթներից, միեւնույն ժամանակ պարզ ու համեստ է՝ չնայած այն փաստին, որ շատերի համար կուռք է: Նրա գործերն արտացոլում են այն մարդկանց փորձը, ովքեր իրենից առաջ փոխել են աշխարհն ու բացել մարդկանց աչքերը:

Ինչպես աֆրիկյան համատեքստը, այնպես էլ Մաջիի գործերն այն ամենի մասին են, ինչը յուրահասուկ է իր չինական ժառանգության համար: Նրանք ստեղծում են պատկանելության, կիսվելու, սեփականության, մարդկանց հանդեպ վստահության համատեքստ, մարոկանց, որոնք, ինչպես նաև մենք, կրթվել են արեւմտյան ազդեցություններով, բայց կարողացել են օգտագործել դրանք իրենց օգտին:

Մաջիան ծնվել է 1961 թվականին, Դալիխանգշանում՝ Սիչուան նահանգում եւ չնայած բարդ հանգամանքներին, մեծացել ու ստեղծել է շարժում, որը բարելավում է մարդկանց կենսապայմանները մշակույթի ու ժա-

ռանգության միջոցով: Նա կուոք ու մշակութային հայր է ոչ միայն իր, այլև աֆրիկյան ժողովրդի համար: Ինչպես Մաջիան, մենք՝ աֆրիկացիներս, ստեղծել ենք ժառանգություն, որը հատուկ է աֆրիկյան ժողովրդին, մեր ժողովրդին, բայց եւ նախատեսված է աշխարհի ու նրա ժողովուրդների կրթության համար:

Մաջիան բացահայտ խոստովանում է իր սերը Աֆրիկյաի, նրա գրական տեխնիկայի ու ոճերի հանդեպ, ինչն էլ նրան մեծ սիրով է լցրել աֆրիկյան մշակույթների ու նրա ժողովրդի նկատմամբ: Իր գործերի միջոցով Մաջիան ուսումնասիրում է ապագաղութացված Աֆրիկյաի վերելքը 1960-ականների վերջին, երբ աֆրիկյան գրականությունը բավական մեծ զարգացում ապրեց եւ այդպիսով նպաստեց աշխույժ մշակութային ու բանաստեղծական ապագայի ստեղծմանը:

Մաջիան հավատացած է, որ այս զարգացումը նաեւ հանգեցրեց ներհայեցողության, մեր՝ աֆրիկացիներիս ինքնության ճշմարիտ բացահայտման, ինչպես շատ ազգերի հետ է պատահում ազատագրումից հետո: Այս բեղմնավոր գորողը, բանաստեղծը, պատմաբանն ու առաջնորդը վառ օրինակ է նրա, թե ինչի կարելի է հասնել, երբ հաղթահարում են պայքարն ու հակամարտությունը եւ այն վերածում հանաձայնության ու խաղաղության:

Իր գործերի միջոցով Մաջիան խոսում է այն մասին, որ աֆրիկացիներին, ինչպես նաեւ իր հայրենի Չինաստանի ժողովրդին, հատուկ է զարգանալ ու բարգավաճել եւ հաղթահարել այն, ինչ անազնիվ խաբերաները, ծպտված հաղթողի կերպարի մեջ, հրամցնում էի հանուն իրենց սեփական ազահության: Չաղթահարելու, զարգանալու եւ պայծառ ապագա ստեղծելու ցանկությունն ակնհայտ է նրա գործերում, բայց եւ կյանքի

դաս է աշխարհի բոլոր ժողովուրդների համար:

Մաջիան գուցե խոսում է այլ լեզվով, բայց ինչ էլ որ ասի, նրա խոսքը պայքարի առհավատչյան է, որ բոլորս զգացել ենք, ենթարկվել ու հաղթահարել: Նա իսկապես պայքարող հերոս է, մարդ, որ մարտնչել է հանուն նրանց կյանքի բարելավման, ովքեր հուզվել են իր գործերից, առաջնորդվել իր մտքերով ու ներշնչվել իր կրօնվ:

Այս ելույթները հասարակությանը տալիս են խիստ առաջադեմ վերլուծություն ու գաղափար, ստեղծում հասարակական համախմբվածություն, որն ուժ է ստանում հասարակական հիշողության նրա զգացողությունից ու բնածին իմացական համակարգերից: Ինձ ներշնչում է նրա յուրահատկությունը եւ անկախ մտածողությունը հիմնախնդիրների եւ տեսակետերի քննարկման հարցում: Այդ եւ այլ պատճառներով Մկիվայի մարդասիրական հիմնադրամը որոշում կայացրեց Զիդի Մաջիային հայտարարել ժողովուրդների մշակութի 2014 թվականի պաշտպան, այդպիսով նա դարձավ Մկիվայի մարդասիրական մրցանակի դափնեկիր առաջին չինացին: Ինձ համար Զիդի Մաջիան ոչ միայն չինացի ժողովորդի հերոսն է, այլև լավ փիլիսոփայական հայացքների տեր մարդ եւ աշխարհի ժողովուրդների առաջնորդ:

Զոլանի ՄկիվԱ

Կենսագրական տեղեկություններ

Զիդի Մաջիան ծնվել է 1962թ., ՉժՇ Սիչուան նահանգի արեւմուտքում՝ Յի մշակույթի բնօրրանի սրտում։ Որպես անհատ ձեւավորվելով ու կայանալով Յի ցեղի նախակին առաջնորդի ընտանիքում, նա ստացել է չինարենի ու չինական մշակույթի համապարփակ կրթություն։ 1982թ. ավարտել է Սաութուեսթի ազգերի համալսարանի չինարեն լեզվի եւ գրականության բաժինը։ 20 տարեկանից սկսած իր բանաստեղծությունների շնորհիվ արժանացել է պետական մրցանակների ու համընդհանուր ճանաչման եւ արագորեն դարձել բանաստեղծների ու գրողների առաջատար ներկայացուցչներից մեկը։ Չինաստանի ժողովրդական Հանրապետությունում։ Նա եղակի է այն առումով, որ արժանացել է կառավարության գովասանքին՝ փոքրանամանությունների եւ Հանրապետության միջեւ սերտ կապեր ստեղծելու ջանքերի համար, եւ այն բանի համար, որ պետական բարձր պաշտոնը չի խանգարում նրա գրական

ձգտումներին եւ չի չեզոքացնում նրա
բանաստեղծական փայլը:

Զիդի Մաջիան ամենասիրված քնարական
բանաստեղծներից է եւ թերեւս գրական ու
մշակութային խնդիրների լավագույն հանրային
խոսնակը Չինաստանում:

Նրա գրական գործունեությունը շարունակվում
է ավելի քան 30 տարի, իրատարակել է
բանաստեղծոթյունների եւ արձակ գործերի 4
ժողովածու տասնյակ լեզուներով:

Զիդի Մաջիան ներկայումս զբաղեցնում է մի
շարք կարեւոր պաշտոններ.

Ցինհայ նահանգի կառավարության՝
մշակութային ժառանգության, կրթության,
հեռուստատեսության եւ ռադիոյի,
իրատարակչության եւ տեղեկատվության բաժնի
ղեկավար,

Ցինհայ լճի պոեզիայի միջազգային
փառատոնի տնօրեն,

Չինաստանի բոլոր եթնիկ գրողների միության
նախագահ,

Ուլյե Տիբեթյան Եղջերու՝ պոեզիայի
միջազգային փառատոնի տնօրեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՇԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Ք. Բալայանի թարգմ.).....	5
Ինքնադիմանկար.....	6
Երգ-աղոթք ցավի մասին.....	8
Կրակե բառեր.....	9
Վերջին լեզենդ.....	11
Հուսահարության ու հույսի միջեւ.....	12
Նյուտոն խոսում է կրակի լեզվով.....	14
Ուրիշ ճանապարհ.....	15
Ժողվրդական երգ.....	16
Քնի լարը.....	17
Պարապիսան.....	19
Մոր ձեռքը.....	20
Հին փավիդ պարբասպողը.....	22
Իմ ցանկությունը.....	26
Անսպով հոգի ուղարկող սուրբ գիրքը.....	28
Գանյիլադայի սարի այծերը.....	29
Տոհմի ոիթմը.....	30
Երկիր.....	31
Ռապսոդիա սեւի մեջ.....	33
Քարի կրորներ.....	36
Սարերի սպվերները.....	37
Հին երկրի հոգիները.....	38
Դառը հնդկացորեն.....	39
Անգեսանելին.....	40
Արթուն հսկել բիմոյին.....	41
Բիմոյի ձայնը.....	43
Ցանկություններ վերադարձող ասպողերի փառապոնին.....	44
Բյութուոյի աղջիկը.....	46
Նեռավոր լեռներ.....	48
Սպիտակ աշխարհ.....	50
Անգեսանելի ալիք.....	51
Դայրենի քաղաքը՝ դիակիզման հող.....	52
Արեւ.....	54

Բյութուտ աղջկան.....	55
Անփառն ու որսորդի մոմի կաթիլը.....	56
Լյուքի լիճը.....	58
Դուլոքստ պար.....	60
Երգ մայրիկին.....	61
Աշնան վնասրպուր.....	64
Էպոսն ու մարդը.....	66
Շալո գեպը.....	67
Դեջի շալո՝ իմ հայրենի եզերը.....	68
Սպասում.....	69
Ծեր երգուիին.....	70
Գույներ.....	71
Ինչ-որ մեկը հարցնում է.....	72
Հանգիսպ.....	73
Հաղորդագրություն.....	74
Աշնանային օր.....	75
Շխտուն ու գեներապը.....	76
Բուդրայական վանքը Լայրն սարի վրա.....	77
Աշխարհի ողջույնի գրանշումները.....	79
Երեխան ու որսորդի թիկունքը.....	80
Երեխան ու անփառը.....	82
Մփոր.....	84
Եղօքրուի սուլիչը.....	86
Շերոսի հանգույցն ու որսորդը.....	88
Գինովանալով.....	90
Վերջին հարբեցողը.....	91
Թող եռնիկը շրջվի ու գնա.....	92
Երկրային պապ.....	93
Աղոթք-երգ՝ փեղաբնիկներին.....	94
Օքիֆֆիի հայրենիքը.....	96
Շերադարձ հայացք 20-րդ դարին.....	97
Դիշելով երիվասարդությունը.....	101
Երախտագիրություն՝ բարի հողին.....	103
Ազարություն.....	105
Այսպես եմ լսում.....	106
Ես խոսքովանում եմ որ սիրում եմ այս քաղաքը.....	107
Չոն աշխարհի գեփերին.....	110
Իմ հուշերի փոքրիկ զնացք.....	113

Այցելելով Դանթեին.....	115
Մազեր.....	116
Տիշիր այս ժամանակը.....	117
Ովքե՞ր եք դուք.....	119
Զրի ու կյանքի գյուղը.....	121
Թիյավանոք.....	122
Իրական պարկեր.....	124
Ռոզա բարիկը.....	125
Ալպակա.....	127
«Նողկացու կոկա.....	128
Քոնդոր՝ սուրբ յօհոչուն.....	129
Կանգուլա ծաղիկը.....	130
Շիկնած ածուխ բուխարիում.....	131
Ինքնություն.....	133
Մեկ բանասքեղծություն, երկու փարբերակ.....	135
Մել գեղ.....	139
Ասպղային դաշփ՝ Գանա Մանեի բուրգի վերեւում.....	140
Ես գրում եմ իմ բանասքեղծությունները երկնի ու երկրի միջևն.....	145
Մեր հայուերի սերնդից.....	149
Պոեզիայի ծագումը.....	153
Չուզեպպէ Ռոնզարեվսկիի բանասքեղծությունները.....	155
Աշխարհի ճամփորդը.....	157
Քո գերեզմանին.....	159
Կարիք չկա որ ներես.....	160
Ես այսքեղ եմ եւ քեզ եմ սպասում.....	162
Մի ծառ Զիլու Բյութում.....	163
Քո բույրը.....	165
Ճերմակ ընձառյուծ.....	168
Մասնաված «ես»-ը.....	170
Գեփ՝ ժամանակի միջով.....	172
Սպվեր.....	174
Օրն անպայման կզա.....	175
Ցեզար Վալեցոյի գերեզմանին.....	177
Մայրիկին.....	179
Հարցում.....	181
Անմահ մուսա.....	182
Մարինա Ցվետատսյահին.....	184

Կրակի ասրված.....	186
Սիրո կարող.....	187
Լուրջուն.....	189
Չայնի գեսակ.....	191
 ԵԼՈՒՅԹՆԵՐ (Ա. Աթարելյանի թարգմ.).....	199
Տարբեր ազգերի գրականությունների ընդհանրությունը գլոբալացիայի համարեքսպում.....	200
Զգելով ոչնչացնել հոգեւոր անկման համընդհանուր միգումը.....	209
Չինական բանասփեղծական գիրը համաշխարհային գրականության համարեքսպում.....	212
Բազմակարծության ժամանակակից մշակույթը և գրողի մարդասիրական զգացումը.....	223
Բանասփեղծի անհարական գիրն ու մարդկության առաջ կանգնած ընդհանուր պատրաստանապվությունը.....	262
Պոեզիան՝ որպես առասպելի և ուրախայի բանալի.....	267
Պոեզիան կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ մարդկային հասարակության մեջ.....	272
Չինացի բանասփեղծի աֆրիկյան բարդույթը.....	275
Դիցարանությունը՝ որպես «Տիեզերքի երգ և ոլորդների երաժշգություն».....	284
Մենք դեռ այսպես ենք. ինքնամաքրան ակր՝ հանուն մարդկության.....	299
 ՀԱՎԵԼՎԱԾ.....	306
Հավաքրի համակարգի հեռանկարըժամանակակից աշխարհում (<i>Դենիս Մայն</i>).....	307
Պոեզիան՝ Չինասպանի մշակութային վերածննդի գործիք և վկա (<i>Ֆրանտոն Ռոյ</i>).....	316
Բանասփեղծ և մշակութային գործիք (<i>Չոլանի Մկհնլաւ</i>)....	324
Կենսագրական գեղեկություններ.....	327

Զիղի ՄԱԶԻԱ

ՆՐԵՂԵՆ ԽՈՍՔԵՐ

Բանասպեղծություններ եւ էստեններ

Թարգմանիչներ՝

Քրիստինե ԲԱԼԱՅԱՆ
Ասորիկ ԱթաբեկՅԱՆ

Չինարենից անգլերեն թարգմանությունները՝
Դենիս ՄԱՅՆԻ

Խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբազրիչ՝ Թ. Մաքետույան
Էջապրումը՝ Մ. Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝ Մ. Դրավյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 21 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 1000:

Տպագրվել է «Դիզակ պլոտ» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25



一个学术性教育性
出版机构

网址: <http://www.fltrp.com>

PUBLISHING RESEARCH AND
TEACHING OF FOREIGN LANGUAGES (BEIJING)
«Օսար լեզուների ուսուցման Եև հետազոտությունների
իրատարակչություն» (Պեկին, Չինաստան)



Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
Հեռ.՝ +37497252323

«ԳԵՂԱՐՄ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից»-

2010

Իռություն Բրոդսկի. «Տեղատարափի շաջունը» - 2011

Ս. Բախտին. «Դուստուևսկու պոետիկայի խնդիրները» - 2012

«Սիրիուսի սրճահարները»/Վ.Խլեբնիկով,

Ն.Գումիշյով, Վ.Խոդասելիչ/ - 2012

Սերգեյ Ռովլաթով. «Միայնակների երթը» - 2012

Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012

Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»-

2012

Ժարկո Միլենիչ. «Լեռնը՝ հրաշագործի աշակերտը»-

2013

Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014

Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով,

Վ.Նեկրասով, Լ.Ռուբինշտեյն/ - 2014

Ռենիիս Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014

Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014

«Կամուրջների խռովությունը.

մետամետաֆորիստներ» - 2015

Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»-

2015

Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.

Պատմվածքներ» - 2015

Արդի ռուսական վերլիբո (անթոլոգիա) - 2015

Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015